

ախտն է՝ եթէ ազատ համարձակ երեւիլ ինչպէս որ եմ. եւ այս վերջինն ընտրեցի: Բնութիւնը զիս այսպէս է ստեղծեր, դաստիարակութիւնն էլ ամէն է, վասնզի փոքր հասակէս անսանձ, համարձակ աճեր եմ ըստ քմաց՝ մեր անտառներու կաղնիներուն պէս: Քու կերպարանքդ, քու նայուածքդ տեսնելով՝ մէկէն իմացայ, որ ես քեզ համար ստեղծուած չեմ, ինչպէս դու ինձ համար. վասնզի դու էլ կը նմանիս իմ հանգուցեալ երկանս՝ միայն այն մէն տարբերութեամբ, որ քու գլուխդ այնչափ ուղեղ կայ, ինչչափ նորա գլխուն մէջ ոչինչ չի կար. մարմնական ուժ մը միայն ունէր եւ յաջող զինաշարժութիւն. բարեբախտաբար հարուած մը երկուքս էլ ազատեց. զնայ՝ կ'եանքէն, զիս՝ գերութենէն: Յիմա՝ այս յիմար ժողովուրդը՝ եւ իւր աւելի յիմար առաջնորդներն եկեղեցական եւ աշխարհական՝ ծեր եւ երիտասարդ ամօթ կը համարին կնոջ մը իշխանութեան հնազանդիլ, ինձ, որ սովորական կին չեմ, այդ մարդու պէս ձի կը հեծնեմ, զէնք կը շարժեմ, երկիւղ ըսուած բանը չեմ գիտեր եւ կը զղամ թէ կրնամ նաեւ իրենց առաջնորդել պատերազմի մէջ: Քանի մը անգամ ուզեցի իրենց հասկցնել, բայց իրենք խոնարհաբար իմացուցին (այնպիսի խոնարհութեամբ, որ սպառնալիքէ տարբերութիւն չունէր) թէ պէտք էր ինձ երիկ մը ընտրելի, եւ երբ ես այս ընտրութեան վրայ հնարք կը մտածէի մեր եպիսկոպոսն ինձ իմացուց սուրհանդակաւ քու գալդ, քու քաջութիւնդ, քու պատմութիւնդ եւ կերպարանքդ, վերջապէս մինչեւ կ'ես-գիշեր տասը պատգամաւոր եկաւ քու իւրաքանչիւր խօսքդ, իւրաքանչիւր շարժմունքդ ինձ իմացնելու. այս կը նշանակէր երկան մը ընտրութիւնը ինձ թողելէն վերջ, այդ յիմարները՝ կը ներես, այդ խելօքները՝ երկան ընտրութիւնն էլ իրենք կը կատարէին, իբրեւ թէ իրենք ամուսնանային: Ուստի այս դատարկ գլուխներուն հետ խօսիլ աւելորդ համարեցի, եւ խօսելէն աւելի իմ ներքին կեանքս ցոյց տալ քեզ պէս սրամիտ մարդու կարելոր դատեցի: Յիմա իբրեւ հին բարեկամի մը քեզ խորհուրդ հարցնեմ. ի՞նչ ընենք: Դու, անտարակոյս, կ'ուզես այս կ'եանքէն ազատիլ, ես էլ նոյնպէս քեզմէ աւելի, ես, որ այս լեռներուն մէջ ծնած եւ կենացս մեծ մասը անցուցած եմ, կը փափագիմ ժամ առաջ թողուլ ելնել աստից, բայց իմ պատրաստութիւնքս դեռ չեմ ամբողջացուցել. մինչեւ այն ատեն քեզ հետ ինչպէ՞ս անցնենք, ահա խողիւրդ: Միայն համարձակ եղիր ինձ հետ ինչպէս ես եղայ քեզ հետ:

— Բայց, իշխանուհի,— ըսաւ Սուրեն ծիծաղելով,— ինչե՞ն յայտնի է թէ զիս փորձելու համար այս երկայն խօսակցութիւնը չըրիք, եւ այդ համարձակախօսութեան տակ ուրիշ գաղտնիք մը չի ծածկուիր: Ինչե՞ն գիտեմ թէ քու իմ վրաս վստահութիւնդ անկեղծ է: